

3 Kreuz

THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎ ՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՆԻ:


ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 60

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ



ՁԵՑԹՈՒՆԻ ՍԻՆՆԱԿԸ

Ի նպաստ Ձէյթուների կարօտելոց ստացած ենք հետեւեալ նուէրներն մեր վերջի հանդիսին առթիւ: Տ. Տ. Թօփալեանէ (Թալապի) \$2.00 Կարապետ Գարեկեանէ (Ֆիլաֆ) 1.00 Տիկին Յովնէֆեանէ (Լօնկ Նիլ) 1.00 Տ. Ստեփան Յովնէֆեանէն » 1.00 Յակոբ Բէշլեանէ (Քօլէճֆոյնթ) 2.00

Գումար 7.00

—Ձէյթուներն առնուած վերջին անգամ թիւները տրուելու կը նկարագրեն Ձէյթուների ազգայնոց նիւթական վիճակը:

Յորենի գին երբ կրկնապատիկ բարձրացած են. ձիւնը արդէն ամեն կողմ պատած է, երթեկեկութեան ճամբաները գոյգոյգած են, որով ժողովրդեան աղքատ և անպատաստ դասակարգը շփոթանց կը տանջուի:

Կաթնուրի ու բողբոջական քարոզիչներուն մրցումը կը շարունակուի: «Յիսուս հացով ու ձուկով ճանչցուց ինքզինքը» կ'ըսեն կրօնավաճառ փրփականատիւները: (Իրաւունք)

—Պ. Ռուբէն կարապետեանի կողմէ Պ. Մանուէլեան զրկած է մեզ մէկ տարբեր ի նպաստ Ձէյթուների:

—Ընդհանուր Գանձապետը ցարդ պատցած է. Արդէն ծանուցեալ \$472.42 Ըօփրինկֆիլաէ 2.30 Պրայթընէ 80.00 Նէշուէէն 16.00

Գումար \$570.72

Գանձապետի հասցէն է.

MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

—Վերջի հանդիսին արդիւնքը, որ 400 տողարէ աւելի լինել կը կարծուի, պիտի կրնանք ծախուցանել զալ շարթու:

—Մեր Պրայթընի թղթակիցը կը ծանուցանէ թէ՛ նախաձեռնութեամբ յանձնարումը չայք ժողով մ'ունենցեր են Գեկա. 11ի երեկոյին՝ Սարաճեան Սրբազանի նախագահութեամբ, ուր արդէն հանգանակուած 32 տողարին վրայ նոր յաւելում մը ըրած են: Հանգանակութեան արդիւնքը, 80 տողար, Սարաճեան Սրբազան զըրկած է ընդհ. Գանձապետին:

—Ըսթեպլինի Հայք Ձէյթուների համար հանգանակութիւն մը պիտի ընեն այս օրեր: Ուրախ ենք որ տեղւոյն հայք, ինչպէս ամեն բարենպաստակ ձեռնարկի, նոյնպէս և ասոր պիտի փութան մասնակցել:

—Շիքակոյի Ուսումնասիրաց ահուճը, հետեւելով Նիւ Եորքցիներու օրինակին, Վարդանանց տօնի օրը նըպատակ ունի հանդէս մը տալ ի նըպաստ Ձէյթուների:

ՏԵԳՐԻՍԻ ՄԱՍԻՆ

Նոր ՏԵԳՐԻՍ մը հրատարակելու համար մեր կազմել ջանացած ընկերութիւնը ուրախ ենք ըսել թէ պիտի կրնայ յաջողիլ, և այս մասին եղած կարգադրութիւններն եւ ուրիշ մանրամասնութիւններ հազիւ երկու շաբաթէն պիտի կարողանանք հրատարակել. և ՏԵԳՐԻՍ սա մի քանի շաբաթներուն համար պիտի մընայ նոյնը մինչև որ վերջնական կարգադրութիւնը ըլլայ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Փարիզէն կը հեռագրեն թէ Պօլսոյ Գաղղիական նախկին դեսպանին Մր. Բամպոնի տեղ Պօլսոյ դեսպան անուանուած է Գաղղիոյ նախկին նախարարապետ Մր. Գօնդառն: Այս անձ Գրանտայի արդի քաղաքագէտներուն ամենաճարակալը կը նկատուի, և հանրապետական կառավարութեան ամենէ ազդեցիկ ու կարող պարագլուխներէն մին է: Երբ Գաղղիայ այսպիսի բարձրաստիճան քաղաքագէտ մը Պօլսոյ կը զրկէ, հասկնալու ենք թէ երկու կառավարութեանց մէջուեղ յարաբերութիւնը սաստիկ ձգտեալ են այժմ: Եթէ Մր. Գօնդառն Սուլթանի քթին հոգի ալ Պուլսոյէն ինչին նման իջնցնել յաջողի, ոչ միայն Հայութեան, այլ և բոլոր մարդկութեան ծառայութիւն մը ըրած կ'ըլլայ: Յաջողութիւն Փրանսայի նորընտիր դեսպանին:

—Գտղղիոյ Փարլամէնթը 65 միլիոն Փրանք յատկացուցած է նոր թընդանօթներ շինել տալու համար: Այս նոր գործիքներն մէկ վայրկեան մէջ քսան և մէկ ուսուց պիտի արձակեն. այս ուսուցիչ գետնիք չ'իկնած՝ երեք կանգունի չափ բարձրութեան մէջ պիտի պայթին ու անոնց սպաննիչ բեկորներն անձրեկ պէս պիտի թափին զինուորներու վրայ: Այս դժոխային գործին կըսուի թէ պատերազմը անկարելի պիտի ընէ: Ընթերցողք զիտեն անշուշտ թէ սովորական ուսուցիչներ շինել ինչպէս վերջ կը պայթին, և անոնց պատճառած քնասները՝ բողբոջատար շատ քիչ է:

—Սպանիոյ նախարարապետը Սենեօր Սակոսթա ծանր հիւանդ է, և կ'ըսուի թէ չի պիտի կրնայ ապրիլ:

—Անգղիոյ մէջ Սըր Ռուլիլմ մարքորթի տեղ, որ վերջերս հրատարած էր Ազատականաց պարագլուխն ըլլալէ, յաջորդ մը ընտրուած չէ քակաւին: Ազատականք կը մտածեն այժմ երեք անձանց՝ Սըր Հէնրի Գամբլ Պանըրմընի, Սըր Էտուարդ Կըրէյի և Մ. Ասկուրթի անուններուն վրայ:

—Մր. Պրայն, Ռամկավարականաց անցեալ նախագահական ընտրելին, բանակէն ելած ըլլալով, Արևմտեան նահանգներու մէջ առնախօսութիւններ ընելով կը շրջի այժմ Սպանիոյ Ամերիկեան վերջի դաշնագրութիւնն եղածին պէս ընդունուելու գաղափարին ի նպաստ:

—Կըսուի թէ Գերմանական դըրամատիրաց ընկերութիւն մը որոշած է 30 միլիոն Փրանք փոխ տալ Տօն Բառլօսի, որպէս զի Սպանիոյ մէջ յեղափոխութիւն հանէ ու գազը յափըշտակէ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Նիւ Հէյվըն, Նոյ. 24.

Ամսոյս 20ին տեղի ունեցաւ քաղաքիս Գրադարանի նորահաստատ ընկերութեան առաջին հրատարակչային ժողովը: Ժողովոյն կը նախագահէր Ընկերութեան Աստիտուտան Ս. Ա. Տէր Մարկոսեան, ընթացաւոր ելլելը բըժըկական ճիւղէն և օգնական բժիշկ տեղւոյս հիւանդանոցներէ միոյն մէջ: Օրուան առնաբանն էր Տ. Յ. Կալանտարեան. յիշեալն նիւթ ունենալով «Հայ ազգին և լեզուին ծագումը» Գերմանական նշանաւոր Արևելագիտաց այդ նկատմամբ ըրած նորագոյն ուսումնասիրութիւններն ներկայացուց յոյժ հմտալից բանախօսութեամբ մը: Ս. Մ. Բէպագիան գողարիկ ճառ մը կարգաց ազատութեան վրայ. Փրօֆ. Գրիգորեան ևս խօսելով ցոյց տուաւ թէ լեզուն միջոց մէջ մեր խորհուրդներն ու զգացումներն արտայայտելու, ուրեմն բարձրացնելը մեր խորհուրդներն ու զգացումներն, բարձրացնելը ներքին մարդն ի մեզ, որպէս զի աւելի ևս բարձրանայ Հայ լեզուն: Այսու յորդորեց ներկայ երիտասարդութիւնը ամերիկեան ազնուագոյն խորհուրդներն ու զգացումներն իւրացնելու ջանալ: Ժողովը փակուեցաւ նախագահին հակիրճ միասնախօսութեամբ. որով մատնանիշ ըրաւ սա էական իրողութիւնն թէ՛ ազգի մը անցեալ ու ներկայ կեանքն իւր լեզուին ու գրականութեանն մէջ կը բովանդակուի, հեռակապէս ազգի հոգին զգալու համար, ազգային կեանքով ապրելու համար, իւր լեզուով ու գրականութեամբ անանելու ենք: Մասնաւոր յիշատակութեան արժանի են նաև Տիարք Մ. Նալպանտեան և Մ. Կարապետեան, որք իրենց երգերով փայլ մը տուին հանդէսին: Ազգային անոյշ զգացմանց սպաւորութեան տակ յոյժ գոհ մեկնեցան հանդիսականք:

Այս ընկերութեան՝ ուրախ ենք որ տեղւոյն երիտասարդաց մեծամասնութիւնն մասնակցած է այժմ, ինչպէս նաև երկու ուսումնասիր օրիորդներ, Ն. և Օ. Գաղանձեանք, որք իրենց այս աշխիւ ընթացքով օրինակ կրնան հանդիսանալ ուրիշ քաղթական օրիորդաց:

ՀՐԱՏ

ԴՁՍ

Որովհետև որոշած եմ քաղաքս Հաստատուիլ. Նիւ Եորքի Ազգայնոց մէջ օգտակար ըլլալու և զգալի պահաս մը լեցունելու փափաքով կրօնական ազատ քարոզի և դասի ժողով մը հաստատեցի ամեն կիրակի առաւօս ժամ ճիշդ 10.30 ին:

Այս ժողովը զերծ է ամէն յարանուանական գոյնէ, նպատակ ունենալով միմիայն ճՇՄՍԻՏԸ և ՕԳՏԱԿԱՐԸ:

Վաղուան քարոզիս նիւթն է՝ «Ճշմարտութիւնը զՁեզ պիտի ազատէ»:

Ժողովին տեղն է, Էլքս Հօլ, 19 Ուէսթ 27րդ Փողոց, Պրօտուէյին անկիւնը:

Երկուսն ազգայնոց ամենն ալ հըրաւիրեալ են: Գ. Պ. Թիթեան

ԳԻՒՑԱԿԱՆ ԿԻՒՂԻՆ ԿԻՒՂԻՆ ԿԻՒՂԻՆ ԵՒ ՈՃՐԱԳՈՐԾ ՄՈՒՍԱ ՊԵՆԸ

Թապալց և Երուսաղէմ

1899 Յունվար 7, Շաբաթ իրիկուն ժամը 8ին, Նիւ Եորքի Հայ-Աւետարանական Եկեղեցին նոր Տարիի հանգէսը պիտի ապ, Երիտասարդաց Գրիտանիական Ընկերութեան մեծ սրահին մէջ, 23րդ փողոց և չորրորդ Ավընի:

Բեմը պիտի լեցունեն հետեւեալները.

Տօք. Ա. Յ. Շաֆլըր պիտի բանախօսէ, նիւթ ունենալով «Միացեալ Նահանգաց Հայ գաղթականութեան պարտքը»:

Պիտի երգեն և նուազեն Մատամ Պլանչ Պարա, Պր. Հինրիխ Բլինկենֆիլմ, Օրիորդ Եօր դաշնակի վրայ պիտի սուլէ, Տիկին Փարքինըն զուարճախօսութիւն մը պիտի արտասանէ, Պր. Արտէն Շմաունեան՝ Հարթֆըրտէն՝ պիտի կատակաբանէ:

Հայ գիւցազնուհի Կիւլլիզարի կեանքը և Մուսա Պէկի հուշակաւոր դատը, որ կ'առաջնան իրաւացի կերպով «Արդարութեան Պոռնիկացու» անուանեց, պիտի ներկայացուն չորս անասրանով: Տօք. Մ. Աթթարեան, որ այս դէպքերուն հմուտ և անոնց ներկայացումներուն փորձառու միակ անձն է, հանդիսին մէջ անոնց մանրամասնութիւնները պիտի բացատրէ:

Օրիորդ Իսկուհի Մեղքօն և Տիկին Տօնճեան Արեւելեան եղանակներ պիտի անձն դաշնակի վրայ:

Հանգէսը արուեստական նորութիւն մը պիտի ըլլայ իր շատ մը երեկոյթներովը. զայն չի տանելը ամեն հայու համար կորուստ մը կըրնայ համարուիլ. և անոնք որ պիտի փափաքէին պատեհութեամբ մը իրենց ամերիկացի բարեկամները մեծարել, յարմար առիթը գտած պիտի ըլլան եթէ զանոնք հանդիսին հրաւիրեն:

Տոմարակները կը ծախուին Պրն. Տ. Տօնճեանի հովիտութեան տակ, անոնք որ կը փափաքին ազգի նստարաններ գրաւել կանուխ պէտք է դիմեն անոր հասցէին 28 իսթ 23րդ փողոց:

ԳՐՈՐԾԱԿԻՐ ԺՈՂՈՎ ՀԱՅ ԱԻՆՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՇԱՐԲԱՐԱՅԻՆ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻ ԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - Խմբագիր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — OSUP ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ՔԱՆՍԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	Տարեկան	10 Փրանք
Վեցամսեայ	Քաճանորդազինն ԿԱՆՈՒԿ	
Յսամսեայ	Վճարելի է միշտ:	

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԲԱՅ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 1898.

ՎԱՂԸ

Ա.

Մարդիկ գան և մարդիկ երթան, բայց աշխարհս յաւիտեան մնայ:

Վաղը նոր Տարի է դարձեալ: Տարիներն կուգան արագ ու կը սահին արագ, և մարդ ուս վիճակուած չէ յաւիտեանս ապրիլ այս երկրագնդին վրայ: Մահկանացուք ծնած են պաշտօն մը կատարելու միայն, և օրին մէկը վիճակուած են մեկնել ո՛ր գիտէ ո՛ւր և որ ո՛ւ ծառայելու համար:

Բարձրագոյն էակի մը կամաց հնազանդող այս արարածներ՝ ի հարկէ պատասխանատու են Անոր՝ իրենց բոլոր գործոց մէջ, և տարեգրուելու կենաց ճամբորդութեան այս հանգստարանն՝ յարմարագոյն առիթը կ'ընծայէ մարդուս՝ իր հաշիւն ու համարը ներկայացնել անոր, որուն պատասխանատու է ինք:

Բարձրելոյն արուելիք այս հաշիւ ամեն մարդ անհատաբար պատրաստելու և տալու է իր տիրոջ՝ երբ առանձնանայ իր խղճի հետ, բայց մեր իրարու և ընկերութեան ունեցած հաշիւներն հրապարակու մտքերու ենք, որպէսզի նոր հաշիւն մը կորենանք բանալ կենաց նոր Տարիի գրքին մէջ:

Այս՝ առթիւ լրագրիներն ալ ունին պարտականութիւն մը կատարելիք, այն է համառօտ հաշիւ մը ներկայացնել ժողովրդեան և քանի մը խօսք՝ անցնող տարուայ գլխաւոր գէպքերուն վրայ: Այս ընելէ առաջ, սուսողական բարի սովորութեան մը հետեւելով՝ այս առթիւ ժամանակին ու առթին յատուկ բարեմաղթութիւններն ընենք նախ՝ մաղթելով որ Ամերիկայի Հայ գաղթականութիւնն բարեբաւորի և արի մը անցնէ յառաջիկային մէջ, իսկ ընդհանուր Հայ ազգը՝ մեր ազգը՝ վերջի ահաբար կորուստներուն ու կորստածներուն կենդանի պտուղը տեսնէ՝ թափուած արիւնէն բուսած ու ծաղկած ազգային ծառատանի մը մէջ: Եւ աայլ երկիրք, որ դարագրուելու չ'ենք, զոր պիտի ողջունենք քիչ ասեմէն, մեր մթապատ հորիզոնին վրայ պլպլար այն աստղը, զոր գտնելու համար այսչափ ճգնեցաւ ու կորուստներ տուաւ ազգը վերջի քառորդ դարուն մէջ:

Տարին, զոր կը բողոքենք այսօր, ազգային տեսակէտէ արտաքոյ կարգի նշանակութիւն մը չունեցաւ դարձեալ: Զարդերուն արիւնը դեռ կարելի է լրիւ ցած գտնել աւերակներու և փրատակներու մէջ՝ անվրէժ: Հայը իւր կրած ծանր վէճքին ցաւը աւելի և աւելի զգաց այս տարի: Մարելիք եկաւ անոր ամբողջութեան վրայ: Վէճքը սաք եղած ասան՝ ցաւը քիչ էր, բայց որչափ պաղեցաւ այն՝ այնչափ ծանր տպաւորութիւն թողուց վիրաւորի սրտին. բժիշկներն — Եւրոպական Գրիստոնեայ ազգերն ու արեւելի քրիստոնէից պաշտպան խաբարներն — փոխանակ դարմանի մը, ծիծաղեցան մեր քթին ու ատոմ ազգին ցաւերը դառնացուցին աւելի, անանկ որ մեզմէ անոնք, որք կոտորածին զոհ գացին՝ իրենց պարտք կատարած եղան՝ դժբաղդութեան ամենէ թեթեւ մէկ մասը կրելով միայն. իսկ անոնք որք կ'ապրին դեռ, դժբաղդութեան մրուրն է որ կը քամեն, ու թափուած արեան փոխարէնը ձեռք ձգելու պատասխանատուութեան ներքե կը հսկեն անմիթար:

Որքերու մեծ բանակը, գաղթականներու ահագին խումբերը և մայր երկրի մէջ տիրող աղքատութիւնն ու անապահովութիւնը վերջի տարիս մէջ աւելի խոր ազ-

դեցութիւն թողուցին ճարահատ ազգին վրայ: Մեր որբերը օտար մարդորս կրօնաւորներու համար «Գրիստոնի նոր այգի մը» դարձան: Գերման, Ֆրանսացի, Կաթոլիկ, Ամերիկացի և ուրիշ առաքելութիւններ յարմար առիթը գրեւորապէս անհովիւ ու անտէր գաղտնակներու հօտին մէջ մտնել՝ մարդասիրութեան քօղով, երբ պահպան չ'կար անոնց մօտ: Հայ ազգը զգաց այս «Յուգոթական համբոյրին» նշանակութիւնը. ըրաւ ինչ որ կրնար. տուաւ ինչ որ ունէր. աշխարհիս ամեն կողմերէն, ինչպէս նաև այս աղքատ գաղթականութեան նպաստներ հասան՝ կարելի եղածին շափ թուով որքեր ազատելու մարդորսներու ծուղակէն. բայց ի՛նչ օգուտ որ պէտքը մեծ ու դարմանը պզտիկ էր շատ...:

Գաղթականութիւնն կը շարունակուի տակաւին. իրաւ որ շատեր վերադարձան Հայրենիք, բայց աւելի շատեր գաղթեցին և գաղթելու վրայ են տակաւին: Ամերիկայ գաղթականութեան Երուսաղէմը դարձաւ: Եգիպտոս, Կիպրոս, Ռուսմանիա, Պուլկարիա և ուրիշ տեղեր հայերով լեցուեցան՝ հացի և ապահովութեան համար:

Ամենէ դժբաղդ դէպքը որ ստիպուած ենք վերագրել անհետանալիք տարւոյն, Ռուսահայ վարժարանաց կորուստն է. հազարաւոր Հայ ուսանողներ՝ Ռուսահայոց ապագայ սերունդը՝ կորուստի մատուցեալ իր վարժարաններով ու անոնց մեծ եկամտանքով մէկտեղ: 95ի կոտորածներուն կրկնութիւնն էր այս: Պատմութիւնը ինքզինքը կը կրկնէ արդարեւ, և ցաւալի է որ մեր ազգային մեծ դժբաղդութիւնը կը կրկնուին այսչափ շուտ, այսչափ շատ և այսչափ կարճ ժամանակի մէջ: Էջմիածնի ահագին գողութեան խնդիրը, որ լուրջեան ու մութի մէջ թողուած մնաց, նշանակութեան արժանի ուրիշ բան մ'է անշուշտ, որոյ վրայէն ընթացողը թեթեւեմութեամբ չի կրնար անցնել ի հարկէ:

Պօլոյ Պատրիարքարանն, Թրքահայոց կրօնական ու քաղաքական գլուխը, եթէ ներքի է՝ այդպէս անուանել, սուսիկ փութիկ Սուլթանի կենաց աղօթելու քաղաքականութեան հետեւեալ. Օրմանեան Պատրիարքէն՝ աւելի կտրուկ քաղաքականութիւն մը կ'սպասուէր, բայց նա իր մեղմ ու ծայրայեղ քաղաքականութեան ընթացքով պատրիարքական աթոռին վրայ իզմիրլեան Սրբազանի թափուր թողուցած տեղը զգալի ըրաւ: Գարակէօզեաններու կտակին խնդիրը դեռ կը քաջալուր. ասոնք ազգը զրկել կուզեն կոտորուած 80,000 սուկէն. որ կրնայ քանի մը հազար որբեր փրկել այս նեղ ժամանակին մէջ, երբ Մէլի ՀԱՅԸ տառը անհատի արժէքն ունի մեզ համար:

Տաճիկ կառավարութիւնն մեզ հետ հաշտուելու ուղեց. Պահանջեց ուղղակի և անուղղակի միջոցներով որ իր թափած հայ անմեղ արեան վրայ երդուած ընենք Սուլթանի գահին հաստատարի մնալ. փորձեց կաշտակ. պատուիրակներ զրկեց Եւրոպայ, ազգին սիրտը շահել ջանաց, բայց ի գո՛ւր: Ազգին ամբողջութիւնն, աշխարհի ամեն կողմերէ, մատնանելու ըրաւ նահատակներու հազարաւոր գերեզմաններն, որք յաւիտեանս պիտի կենան թուրքին ու Հայրենի մէջ: Եւ ինչպէ՞ս հաշտուել տնոր հետ՝ որ երէկ ջարդեց և այսօր եղբայրանալ կ'ուզէ՞՞ առանց իսկ փոխարինելու իր պատճառած զնտաններուն:

Սակայն այս դժբաղդութեանց հանդէպ քաջակրական կէտեր ալ ունինք արձանագրելիք, ասոնց յամենէ նշանանաւորն սա է թէ Հայը, որպէս միշտ, չի յուսահատեցաւ բնաւ, այլ ընդհակառակն կրկնապատկեց իր ջանքերն կեանքի գոյութեան ու չի գոյութեան կռիւը աւելի ոյժով շարունակելու՝ անվստ: Տոկոսութեան խմորով խմորուած այս դարեւոր ցեղ ցոյց տուաւ նորէն թէ ինք՝ մարդկութեան հետ ծնած՝ որչա՞ծ է մարդկութեան հետ միտնել՝ տիեզերական ճարտարագետի մը հրամանաւ միայն: Հայ ազգը իրաւամբ նմանցուցած են ճիւղակտուր ծառի մը, որուն արմատը կենդանի է հողին մէջ. անոր բունը զնտուած չէ բնաւ. երբ Գարունը գայ, այդ բունն կը ծլի և ճիւղեր կ'արձակէ նորէն, զի աշխարհը միակերպ չ'ընթացաւ միշտ. Զմեռը կանցնի անուշաւ, և օր մի չէ օր մը Գարունը կուգայ անպատճառ: Եթէ դարերը ազգերու կեանքին մէջ տարիներ են միայն, մեր ազգին համար օրեր ալ չեն թերևս: Անոնց ահեղ փոթորիկներուն առջև շատ անգամ դիմադրող այս անասան ժողովուրդ չի կրնար մեռնել, և կեանքն անապագայ չի կրնար մնալ:

Անիշխանականաց յախուռն ընթացքին դէմ համազգային զօրաւոր թուած մը կանգնելու նպատակաւ՝ Հռոմի մէջ տեղի կուտնենայ այս օրեր գեոպոլիտիկոսները մը, որ գրեթէ բոլոր ստեղծութեանց կողմանէ զրկուած պատգամաւորներէ բաղկացած է: Սուլթանն ալ իր ներկայացուցիչները դրկած է այս գեոպոլիտիկոսներին, և ասոնք՝ նուրի և Հազգը փաշաները անցեալներն Հռոմի հասած են արդէն: Թուրք ներկայացուցիչներէ մին՝ նուրի. կ'ըսուի թէ հրահանգ ստացած է իր վեհափառէն տարօրինակ առաջարկ մը ներկայացնելու գեոպոլիտիկոսներին. այն է ժը-

նէվի, Լօնտոնի և ուրիշ տեղերու Հայ Եկեղեցիականներն ալ անիշխանական նկատելի, ու հետեւաբար գանձեց ենթակայ ճանչնալ գեոպոլիտիկոսներին անօրինակ օրէնքներուն, որոնցմով կը մտածուի անիշխանականներն բընաջինջ ընել երկրագնդէս՝ տէրութեաց հաւաքական գործակցութեամբ:

Պօլոյն զրկուած այս առաջարկ ակներև է թէ անտեղի է բոլորովին և նուազ դարմանալի, որովհետև երկայն մազ ու կարճ խելք ունեցող անձերէ յղացուած է: Դեոպոլիտիկոսները այս խնդիրը ի հարկէ Տաճիկական ակնոցներով չի պիտի դիտէ. աշխարհ գիտէ թէ Հայ Եկեղեցիականն մ'է անիշխանական է և ո՛չ անարշիւթ, այլ թըրքական բարբարոս լուծէն ազատուելու համար աշխատող մ'է, որ ամբողջ ազգին, լաւ և է ըսել արդարութիւնն ու ազատութիւնն սիրող ամեն մարդու համոզման ու հաւատքին կը դաւանի:

Այս կարգին գէմ չէ որ գեոպոլիտիկոսները կողուած ունի կռիւ մը՝ զի անոնց նպատակը ծայրայեղներն արմատախիլ ընել է եւրոպայէն, որպէս զի թաղակիր գլուխներն հանգիստ քնանալ կարողանան:

Անիշխանականութիւնը — արմատականութիւնն եթէ կամիք — ընկերական յոռի դրութեանց յառաջ եկած հիւանդութիւնն մ'է ազգաց մէջ: որ աւելի մուտ գաւած ու ճարակուած է այն անդ՝ ուր բունութիւնն ու անարդարութիւնը աւելի զգալի է ու ժողովուրդը՝ բաղադատաբար՝ աւելի զարգացած: Հասարակ հիւանդութեանց պէս այս հիւանդութիւնն ալ բուժելու համար, բնական օրէնքով, անոր պատճառը գտնելու և դայն բուժուած է մէջտեղէն՝ արդեւքը կրնալ բուժուալու համար: Եւ այս վարդապետութիւններն, հոգ չէ ինչ անունով ալ ճանչցուին, պարզ արդիւնքներ են և չեն կրնար բուժուիլ, եթէ անոնց պատճառը չի բուժեն իշխանութիւնը: Տէրութեանց հաւաքական ոյժը կրնայ բնաջինջ ընել բոլոր անիշխանականներն, բայց անոնց վարդապետութիւնն արմատախիլ չէ կարելի ընել զինու զօրութեամբ: Սուրբ կը հնազանդեցունէ, բայց չի կրնար գոհացնել ու համոզել զմարդ:

Այս տեսութեամբ՝ աւելորդ է թերևս ըսել թէ Դեոպոլիտիկոսները սպարդիւն պիտի մնայ, զի կարելի չէ մտածել թէ այդ մարդիկ պիտի ուզեն, լաւ և է ըսել, պիտի կարողանան խնդրոյն բուն պատճառին մօտենալ: Անոնց իրաւասութեան չափ վեր է հասարակ ժողովուրդի իրաւունքն ու քրտինքը կողոպտողին վրայ ձեռք դնել, ու թող տալ որ ամեն աշխատող մարդ իր քրտանց արդար ու ամբողջ արդիւնքը վայելէ: Եւ մնաց որ բուժուողը բուժուածն է գէմ կուռիլ չի մտարեւոր անգամ:

Բայց եթէ Դեոպոլիտիկոսները պիտի կարենայ իրական դարմանը գտնել ընկերական ներկայ յոռի դրութեանց յառաջ եկած այս անպատկառութեանց, ու իր սնորհած օրէնքներն այս բնութիւնը պիտի ունենան, ո՛չ միայն ժընէվի, Լօնտոնի և ուրիշ քանի մը տեղերու Հայոց անիշխանական ճանչցուելու պիտի ուզէինք, այլ պիտի աղօթէինք որ աշխարհի վրայ ապրող այն ամեն տառապալներն, որք Մեսրոպի հնարած տաւերով կը գրեն ու կը կարգան՝ ամենաճարայեղ արմատականներ նըկատուին...:

ԴԱՐՁԵԱԼ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կը փափաքիմ մի քանի զիտողութիւններ ևս ընել Բարեգործական Կենտրոնի անդամները...

Դիտողութիւններ սկսել առաջ, սակայն կուզեմ լաւ մը ըմբռնել առ ընթացողաց թէ՛ ո՛չ Բարեգործական Կենտրոնի անդամները...

Որքան որ Բարեգործական Կենտրոնի անդամները կը զգան իրենց պարտականութիւնը...

Ի՞նչ բերի մեզ դու նոր տարի. Տուներու մէջ ծիւղ աղածքի Հովտին, ձորին, դաշտին բերի՛ Ծուռան, մեծիս, բոյսեր դալար, Բերի այն որ բերկրանք տայ յար:

Սիրով եկար, Հաղար բարի: Ի՞նչ բերած ես դու նոր տարի. Սերմ ցանցի բոյսեր, սէրի, Ըսի որ սին հիմէն մարի. Ողորտ սրտից բերի Հովտի, Եւ ամուրից՝ խինդ ու գորով:

Ինչե՛ր բերի, ա՛խ, նոր տարի. Հիւթեր, յոյզեր ծաղկի, ծառի, Զեղուն գոգով պարզ երբի. Որինք ու ծիծաղ՝ ոսկի ամբան Նախուն գարնան գեղ անմամն:

Այլ բան բերի դու նոր տարի. Ծոյ ու ցողեր՝ վարդ, յամիկի Երթ ու շողեր՝ խոտ ու մարգի. Թիոց բերի առաւ ճիւղ, ծիւղ, Վտակին ալ՝ ձայն մը գիւղի:

Այլ բան ունի՞ս դու նոր տարի. Բոյլ բոյլ առտեղջ մէջ, յանտառի Գեղի, դիւթի նիւթեր դըրի. Լուսնին տուի դէմք մը ժպտուն, Փոխան մախկոտ երազներուն:

Հե ցարդ, և թէ անյաջողութեան պատճառներն որոնք եղած են, որպէս զի ժողովուրդն ևս՝ ըստ այնմ՝ տնօրինութիւն մ'ընելով գործն շարունակէ:

Յիշէ՛ Պատ՝ Հայկունի մի ընդհանուր ժողով կազմելով՝ կարենայ ինքզինքն և իւր վարչութիւնն արդարացնել, ու ժողովուրդն ևս համոզուի թէ իրօք Բարեգործական Կենտրոնի անդամներն իւր պարտականութիւնն լիով կատարած է, ես պատրաստ եմ հրապարակաւ իր ներողութիւնն խնդրել:

ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ իւր տալիք բացատրութիւններն զիս չի պիտի գոհացնեն. ինչ որ պիտի ըսէ, կը փափաքիմ ընդհանուր ժողովի մը մէջ լսել, և արդէն ժողովրդեան արդար պահանջուն ալ այդ է:

ԳՐԻԳՈՐ ԶՊՈՒՔՃԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Ի՞նչ բերի մեզ դու նոր տարի. Տուներու մէջ ծիւղ աղածքի Հովտին, ձորին, դաշտին բերի՛ Ծուռան, մեծիս, բոյսեր դալար, Բերի այն որ բերկրանք տայ յար:

Սիրով եկար, Հաղար բարի: Ի՞նչ բերած ես դու նոր տարի. Սերմ ցանցի բոյսեր, սէրի, Ըսի որ սին հիմէն մարի. Ողորտ սրտից բերի Հովտի, Եւ ամուրից՝ խինդ ու գորով:

Ինչե՛ր բերի, ա՛խ, նոր տարի. Հիւթեր, յոյզեր ծաղկի, ծառի, Զեղուն գոգով պարզ երբի. Որինք ու ծիծաղ՝ ոսկի ամբան Նախուն գարնան գեղ անմամն:

Այլ բան բերի դու նոր տարի. Ծոյ ու ցողեր՝ վարդ, յամիկի Երթ ու շողեր՝ խոտ ու մարգի. Թիոց բերի առաւ ճիւղ, ծիւղ, Վտակին ալ՝ ձայն մը գիւղի:

Այլ բան ունի՞ս դու նոր տարի. Բոյլ բոյլ առտեղջ մէջ, յանտառի Գեղի, դիւթի նիւթեր դըրի. Լուսնին տուի դէմք մը ժպտուն, Փոխան մախկոտ երազներուն:

Ինչ բան ունի՞ս դու նոր տարի. Տիկով արցունք, վէրք տապարի. Մահուան լախտին կողով բերի. Սիրտ արեւնոց շատ Հառաչները, Որտակ, քամի յոյժ տարուերի:

Ինչ բան ունի՞ս դու նոր տարի. Գեղնայ դէմքեր ձիւնի, սառի, Սիրտ սողնոց ձայն գուժերի. Հօտը՝ Հովուէն ձագը մօրմէն Բանի գատոց բաղբեր դժխէմ:

ՅԱԿՈՒՆ ՆԱԼԲԱՆՏԵԱՆ

Փօլ Րիվեր

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

Վերջի 15 օրուան մէջ Նիւ Եորք Հասնոց Հայ գաղթականաց թիւր 50ը կ'ընեն:

—Ըստեւելին սակաւաթիւ գաղթականութիւնն վերջերս 50 տարի հանդանակած ու Տիգրանակերտ զբրկած է՝ չքաւոր ընտանիքներու բաժնուելու համար:

—Հայաստանի մէջ մի քանի անգամ արագացինք ձեռնարկեր են ետ ուզել միախօսարներու քով գտնուող իրենց որբերն, դժուր ըլլալով որ այս որբեր ո՛չ եկեղեցի կը դրկուին, ո՛չ ալ գէթ Հայ աշխարհական կրօնուսոյցի մը ձեռամբ Ազգ. Եկեղեցիին վրայ ո՛ր և իցէ բան մը կը սովորին:

—Անցեալ օր Պօլսոյ Պատրիարքարանի երկու պաշտօնեաներ Պայպլ Հաուզ երթալով, միախօսարական աստատութիւններուն մէջ պահուող որբերուն նկատմամբ բանակցեցին:

—Անցեալ կիրակի Լորէնտի գրադարանի Յրդ տարեգրածը ամուսնած է մեծ շքով: Ատենախօսութիւններ եղած ու ճառեր կարդացուած են այս առթիւ, ու Օր. Հայկանուշ Տիրտպանեան բանաստեղծութիւն մը արտասանած է շատ հաճելի կերպով:

—Պաքուցի Հայ բարերար Պ. Մատուրով 10 հազար Փրոնք դրկած է Ս. Պատրիարք Հօր՝ յանուն որբերու և կարօտեալներու: Աստուած մէկին տեղ հազար տայ:

—Քաղաքիս Հ. Ե. Թանգարանի միութիւնն Գրադարանը ժողովրդին օգտակար ընելու դիւրբի մը մէջ դընելու համար խնամակալութեան կողմանէ ընդհանուր ժողով մը ունեցաւ անցեալ Ծառաթի երկկոյ: Ներկայ էին 40ի շատ անձինք. յետ երկար ու սնտրի վիճարանու խեղճ, ոչ ինչ կարելի եղաւ ընել և քանիներ, որք ետանդով եկած էին՝ վհասած մեկնեցան:

—Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ. «Անցեալ շաբթու Հայոց դատ մը տեսնուեցաւ տեղւոյս մէկ դատարանին առջև: Յ. Ռոտիկեան ժամանակ առաջ իր դերձակի խանութը Յ. Պօղիկեանի կը վաճառէ՝ պայմանաւ որ մինչև մէկ տարի ոչ խանութ բանայ և ոչ ալ իբր դերձակ գործէ Ուսթըրի մէջ: Սակայն քիչ ատեն յետոյ Ռոտիկեան՝ հակառակ այս պայմանին՝ իր ծախած խանութին մօտերը ուրիշ մը բանալ կը ձեռնարկէ. խնդրք դատարան կ'երթալ: Դատարար ի նպաստ Պօղիկեանի վճիռ տուաւ անցեալ օր. բայց բարեկամներու միջամտութեամբ, և նկատելով որ Ռոտիկեան, որոյ ընտանիք դեռ վերջերս Ամերիկա Հասած էր, պիտի վաճառէր բաւական այդ վճիռ գործարարութեամբ, Պօղիկեան հաճեցաւ արտօնութիւն տալ իր հակառակորդին որ շարունակէ իւր գործ՝ նոր բացած խանութին մէջ:»

Առանց դատարան երթալու կարելի չէ՞ր այդ շնորհ ընել... ու խնդրել դատարանէ դուրս լուծել:

—Այս շաբթու Նիւ Եորք Հասնոց Հայ գաղթականներու մէջ կան երեք ընտանիքներ, Նահապետեան, Սատոյեան և Կ. Հէքիմեան ընտանիքներ:

—Ամերիկայի Դաշնակցական, շքանշանակալ և վերակազմակալ Հնչակեան կուսակցութիւնները իրենց պատգամաւորական ժողովները ունեցած են Պօսթնի, Ուսթըրի և Սէլըմի մէջ: Ժողովները սկսած են անցեալ Ծառաթի երկկոյ՝ և վերջացած են մինչև երկուշաբթի երկկոյ: Վերակազմակալներու Նիւ Եորքի ներկայացուցիչն էր Տ. Զիթմեան, իսկ Դաշնակցականներուն՝ Տ. Զարաֆճեան:

—Նոր Տարւոյ առթիւ Ազատ Լըսարանը գոց պիտի մնայ վաղը երկկոյ:

ԱՐՄԻՆԻԸՆ ՓՕԷՄՍ

(Հայկական Բանաստեղծութիւններ) Անգլիերէնի տաղաչափեց Ա. Լ. Ս. Ը. Ս. Ք. Ո. Ն. Պ. Լ. Ա. Ք. Ո. Ի. Է. Լ. Գիւնն է \$1,25 Փօսթի ծախքով միասին. Դիմել առ Miss Alice Stone Blackwell, 3 Park St, BOSTON, MASS.

ՀԱՅ ՅԱՃԱՍՈՐԴՆԵՐՈՒՍ

Նոր Տարիի առթիւ շատ մը կաղանջէքներ ունինք. լավանթաներ օճառներ և ուրիշ շատ մը յարմար բաներ, միշտ գոհացուցիչ և զիւրաւմասշնչի գնեցով:

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Ուինազըր Հէր վիկըր» անուն հրատարակիչի մազի գեղը պիտի ծախենք շաբթու 50 սէնթի: Հմուտ բժշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյնն է մազերը գորացնելու, բուժելու և նախնական գոյրը պահպանելու համար:

Տակաւ մը գուտ Նորվեգեան ձուկի իւր բերել տուած եմ, որոյ լիւրան 45 սէնթի պիտի ծախենք:

Դեղագիրներն կը պատրաստուին աժան և թարմ գեղերէ: Փորձեցէք: ՈՒՆՏՍՈՐ ՏՐԼԿ ԸՍԹՕՐ, Մարմ Հասնուղը 472 Յրդ ավիւ, Նիւ Եորք:

ԵԱՂՈՒՊ ԻԼՊԵԿԵԱՆ ԵՒ ՅԱԿՈՒՆ ՏՈՍԹՈՒՄԵԱՆ

38 Լիւրթի Փողոց, Ուսթըր, Մասս. Կը ծանուցանեն արգոյ ազգայնոց թէ խիտ լաւ տաճկական ապրանքներ ունին. ինչպէս խալի, թէյպը և փխնոյ քվըրներ, սէնթի, կիւլեաղի, թաշկինակ, սիկարի թուղթ և ուրիշ ընտիր կարգի շատ տեսակ թրքական ապրանքներ, որոնք ընծա տրուելու յարմարագոյն իրերն են. այս ամենքը կուզեն ամենաժաժան գընելու ծախել լինելու. Եթէ ուրիշ քաղաքաց ազգայնք փութը քարթով մը դիմեն, փոյթով պատասխան և գոհացում պիտի ստանան: Կուզեն նաև շափաւոր գեղով մը ծախել Փրոսկոթ փողոցի թրքական բաղնիքը:

ՄԱՍՈՒ ԳՐԻԵՐ

Լրագրոյս խմբագրութիւնն վեներաբան Միլիթարեանց Տպարանին հետ մասնաւոր կարգադրութիւն մը ըրած է՝ նոյն տպարանէն ի լոյս ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառելու համար:

Ո՛ր և է գիրք ստանալ փափաքողները կրնան դիմել մեզ անձամբ կամ նամակաւ:

ԱԶԴ

Տ. Աշոտեան, որոյ ամուսինն իբր մէկ ու կէս ամիս առաջ կընքած էր իր մահկանացուն տղայարեութեան առթիւ, կը փափաքի իր միամօր դուստրը, անցեալ Նոյ. Դին ծնած, քաղաքիս մէջ կամ մօտերս ընակողի մը յանձնել խնամուելու համար: Տ. Աշոտեան յանձնառու է գոհացուցիչ վճարում ընել այս մասին:

Փափաքողներն դիմեն յիշխալին հետեւեալ հասցեով: 90 Ամբսթէրտամ Ալիւ, Նիւ Եորք:

ԿԸ ՓԵՏՈՒՒԻ

Յունաստանէն Լեոն և Արթիւն Ծաղեան անուն անձերն իրենց հօրեղբոր Յովհաննէս Ծաղեանի հասցէն կը փնտրեն: Այս անձ բաւական ատենէ ի վեր Ամերիկա եկած է եղբոր Գրեյ Գէորք Պէրկիկեանի, թիւ 301 Ուէսթըրն Ալիւ, Պայքըն, Մասս.

ԱՊԱԿԱՆԱՐԱՐ ԲԱՄԻՔԵՐ

Սողոմոն պատմական ապականութիւնը պատկերելու համար կը պատմուի թէ. օտարական մը օր մը կը պատէր Սողոմոնի փողոցները՝ երբ անպարտ տեղը մէկը զարկաւ և մարդուն գլուխը կտարեց շարաշար: Մարդը արիւնլուտ այժմոտարան դիմեց շարագործին պատիժ պահանջելու, ուր խեղճ օտարականը ի՛նչ սոսկալի հիւսաթափումով մը ցնցուեցաւ երբ դատաւորէն հետեւալ վճիռը լսեց. «Այն մարդը քու գլուխէդ արիւն հանելու համար աշխատանք քաշեր է, ատոր համար դուն անոր տասը դահիկան վարձք վճարելու ես»: Օտարականը այս լիբը դատաստանը լսելուն պէս, մտքի ներկայութիւնով մը՝ դաւադանի ահագին հարուած մը կ'իջեցունէ դատաւորին գլխուն, արիւնը կը հոսեցունէ և կ'ըսէ. «Արդ ի՛նչ որ դու ինծի պարտեցար՝ վճարէ իմ գլուխս կտորոզին»:

Պօլոյ «Փունճ» լրագրից, որոյ մասին ներսէս պատրիարք ըսեր էր թէ «ն: գիրը աւելորդ է: Վերջերս Ամերիկայէն ամենալիբը զբարտառութիւններու գլուխ գործոց յօդուած մի հրատարակեց, ուր ի միջի այլոց կըսուէր թէ. իբր. «Մաշթոց վարդապետ Ուսթըրի եկեղեցւոյ սպասները գողցեր, փախչեր և գնացեր ամուսնացեր է»: Բաղաքիս ամենապատուաւոր ազգայիններէն մին, ինչպէս որ պէտք էր, նոյն թերթի մէջ հերքեց այդ սուտերը, շատ պարզ ու զօրաւոր ոտով մը: Յիշեալ թերթին խմբագիրը սոյն հերքումն հրատարակեցէն ետքը նամակով մը գրումով կընէ յօդուածագիր աօքթէօրին և կը խնդրէ որ արեւհաճի Մաշթոց վարդապետէն ԲԱՆԻ ՍԸ ՏՈՒՐ առնել լրկել իրեն (խմբագրին) ի վարձատրութիւն հրատարակուած հերքումին: Հոս Սողոմոնի վերի պատկերը չը գար աչքերնուս առջև:

Մաշթոց վարդապետ փառք տալու է Աստուծոյ, շնորհակալութիւն՝ Փունճ թերթին, և քանի մը տուար ալ Պր. Ալեքանդրեանին, որը՝ իր անձնական ու եկեղեցական պատիւը նողկանքի կարասին մէջ, անպարտ տեղը, լաւ մը ներկայէն ետք, շնորհք ըրաւ, վրան քիչ մը մաքուր ջուր լեցուց և թողուց որ ազատ երթայ: Այս սոսկալի անբարոյականութիւնը թիւրք պաշտօնէից մէջ շատ տեսնուած է, որոնք անմիջ հայեր բանտը կը տանին, օրերով, ամիսներով ու տարիներով կը ծեծեն, կը տանջեն դանակով ու ետքը «անմեղ էք» ըսելով ազատ արձակած ասան «պախիշի» կուգին: Սակայն անդարձանելի ցաւ մը կը գտնուի երբ նոյն երեւոյթը Հայ հրապարակագրութեան մէջ կը տեսնենք: Պր. Ալեքանդրեան առանց քնննութեան, անխնայ և անխղճօրէն կ'աքատուորէ երեսասարգ կղերի մը պատիւը, և փոխանակ անկէ ներողութիւն խնդրելու, անկէ դրամական վարձատրութիւն ալ կուգէ, «անպարտ էք» ըսելու համար:

Ցաւալի է որ Պր. Ալեքանդրեանի պէս մարդեր քիչ չեն այսօր մեր ազգին մէջ, որոնք անմեղի մը պատիւը սպաննելու ատեն՝ ո'ւ է խղճահարութիւն և փոյթ չեն ցուցներ. սակայն անպարտ զոհի դիակին վրայ, գէթ «անմեղ էք» ըսելու համար վարձատրութեան կ'սպասեն: Ընկերութիւնը այսպիսի ապականիչ ճիւղերէ մաքրուելու համար պէտք է որ ժողովրդեան մէջէն ելին Սողոմոնի յիշեալ օտարականին պէս անձեր, որոնք հարուածը տան անանկներու գլխուն և դանոնք խնւրբերեն:

Նիւ Եորք, Դեկ. 13 Գ. Պ. Չիթճեան

Կ'ՈՒՂՈՒԻ Առանց իրեն հետ զաւակ ունենալու, Հայ կին մը կ'ուզուի իբր 35 տարեկան՝ տան մը մէջ հասարակ տնային գործեր ընելու: Շարաթական է երեք տուար: Փափաքողներն զրեն լրագրոյս խմբագրութեան:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՄԱՔԱՆԱԿ (Հօլլանդ) ՎԱՃԱՌԱՎԱՆԻՔ

Արեւելեան և Տաճկական Ապրանքային Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու երբ: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անղնազորներ, սեղանի, մէնթըրի, փիւնայի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականը կը հրաւիրուի փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրեւոր չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո'ւ է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

ԲԱՉՄԱՎԷՊ ՀԱՆԻՍՍԱՐԱՆ

Ամսագիր Գրական, Բանասիրական, Կրթական

Եւ Գիտական.

Կը հրատարակուի Վենետիկի Միլիթարեան Միտանութեան կողմէն:

Բացուած է բաժանորդագրութիւնն 1899 թուականի համար:

Ամերիկայի համար արեւկան բաժանորդագրին է 2 տուար կանխիկ: Հասցէն է՝

Redaction de la revue BAZMAVEP, St. Lazare VENISE, Italie:

ԱՉԻ

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պաշտամունքը կանոնաւոր կերպով կառավարելու համար դպրոց դաս մը կազմելու ձեռնարկած լինելով՝ ձայնաւոր երկասարգներու պէտք ունինք: Ուստի Ս. Եկեղեցւոյ երգեցողութեանց քիչ շատ վարժութիւն ունեցող մեր եղբայրներէ կը խնդրենք յատկապէս որ հաճին գալ միանալ մեզի, որպէս զի կարենանք մնայուն և կանոնաւոր դպրոց դաս մը ունենալ: Դիմել առ Պ. Աւետիս Գրգուր-ՋԵԳԵԱՆ, Թիւ 306 Իսթ 28րդ փողոց: Կամ Տ. Գրգուրեանի, 306 Իսթ 28րդ փողոց: Ի Դիմաց Դպրոց Դասու Դպրապետ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ

TURKISH GEMS.

Նարեկատիւն հօճային մէսէլներուն Անգլիան կողիկ թարգմանութիւնը՝ հանդերձ հօճային պատկերով, մաքուր սպաքութեամբ գրքոյի մը վերածած եմ, որն որ Ամերիկացի և այլ բարեկամացնուէր տալու շատ յարմար է: Գինը 25 սենթ է, զրկելու ծախար վրաս: Դիմել Պատ. Ս. Վ. Պէտրիկեան, Rev. S. V. BEDICKIAN, 275 Ridge Ave, ALLEGHENY, PA.

ՊՈՒՂՈՒՐԻ ՄԻՍՅԵԱՂ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO. 151 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատե փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլուրը մեծ ընդունելութիւն գըտած է ամէն տեղ: Առանց քարի և անխորժ հոտի Պուլուրը ամէն Հայ տունէ կը փնտռուի: Մենք, որ միակ Պուլուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախողք եթէ գոչ չի լինին մեր ապրանքներէն դրամներն ետ կը արուի, թէ և ցայսօր ոչ մի Հայ տոգոհութիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն Հայ տիկիները:

Պուլուրի լիպրան կարծէ 3 1/2 սէնթ խանութներու և ճաշարաններու համար: Իսկ տուններու համար 4 սէնթ: Յանձնարարութիւնը զի կը կատարուին: Փոխադրութեան ծախքը գընողին վրայ է:

ԹԱՇՃԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳՈՐԾ ԵՒ ՄՍԱՎԱՃԱՍ

573-579 ԲԷՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ

ԲԷՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գին և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը փշրի և ոչ ալ թթու է: 1 փնտ. հացը 3 սէնթ միայն կարծէ: Միսը միշտ թարմ է ու գեղեցիկ գոհացուցիչ: Կը վաճառէ նաև ածուխ, քարիւղ և վառելիք փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և աժան: Մասնաւոր կառք ունի տուն փոխադրելու համար խիստ աժան գնով: Փորձեցէք անգամ մը:

Վճարումներն կանխիկ կըլլան ձանապարհի ծախսը գնողին վրայ է:

ՊՈՒՂՈՒՐ--ՊՈՒՂՈՒՐ--ՊՈՒՂՈՒՐ

ՊԱՆՍԱՍԻ ԹԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co.,

53 MAIN ST., BANGS COURT, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ հաստատած են այժմ պուլուրի և ծեծածի գործարան մը վերայից ալ անուան ասի: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն զիւրաժանութիւն գնելով կը վաճառուին, այլ և մաքրութեան ու տեսակի կողմէ անհամատար ընտիր են ուրիշներէ:

Խանութպաններու համար խոշոր կամ մանր պուլուրի փառնար կարծէ 3 սէնթ, իսկ տուններու համար 3 1/2 սէնթ: Տուններու և ճաշարաններու համար զիւրութիւն տալու նպատակաւ որոշուած է մինչև 25 փառնար քանակութեամբ ապրանք վաճառել: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշիւ կը կատարուին:


Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք:

ԱՆԱՀԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս

Ազգային, Գրական Գեղարուեստական Ա. 20 ՊԱՆՍԱՍԻ, խմբագիր:

Տարեկան բաժանորդագրին է \$2.00 երկու տուար միայն: Հասցէն՝ A. Tchobanian, 6, Place de l'Odéon, PARIS, France,



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գններով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձևաւոր և վայելուչ կերպով: Կը նորոգենք հին կօշիկներ չափաւոր գններով: Ուրիշ ի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղէք որ շատ գոչ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց « \$1.25է « \$2.50 Տղայոց և աղջկանց կօշիկներ \$0.50է « \$1.50

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՉԻ ԴԵՂ

Advertisement for HIRSOLO hair food. Includes an illustration of a woman's face and text describing the product's benefits for hair health.

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւսնազուրկութիւնն ու կը մաքրէ թեփերը:

Միանգամ փորձել բաւական է սաղիկին արժէքը զիտեսալու համար, 7րդ արեւելեան խոտեղէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով:

Կը ծախուի բոլոր գեղարդներու ընդ: Գինն 50 Սէնթ միայն:

Կարելի է ոտանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րեկերութեանէն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարականի բով, Թիւ 45 Էքսչէնճ ըսթ-րիթ, Ուսթըր, Մասս:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող գանոնք հրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարեւու, էլէքթրօթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն անէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գըրել լրագրոյս խմբագրութեան:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետուժ, յամակազուրկ, հրաւիրագիր, շրջանակախաններ, տետրակներ ևն. Մեր գնորդ գոհացուցիչ են. տըպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով: